Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-275[1]-26.05.2022-ՏՏԳՇ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածի.

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Համայնքի ավագանու նիստը հրավիրում և վարում է համայնքի ղեկավարը, կամ նրա բացակայության դեպքում՝ նրա տեղակալը, կամ համայնքի ղեկավարի պաշտոնակատարը, իսկ սույն օրենքի 27-րդ հոդվածի 2.2-րդ մասով սահմանված դեպքում՝ համայնքի ավագանու՝ տարիքով ավագ անդամը. նրանք ունեն խորհրդակցական ձայնի իրավունք:».

2) 5-րդ մասում «համայնքի ղեկավարը կամ նրա պաշտոնակատարը» բառերը փոխարինել «նիստը վարողը» բառերով:

Հոդված 2. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում «նրա պաշտոնակատարը» բառերը փոխարինել «կամ նրա բացակայության դեպքում՝ նրա տեղակալը, կամ համայնքի ղեկավարի պաշտոնակատարը, իսկ սույն օրենքի 27-րդ հոդվածի 2.2-րդ մասով սահմանված դեպքում՝ համայնքի ավագանու՝ տարիքով ավագ անդամը» բառերը:

Հոդված 3. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 41.5-րդ կետով՝

«41.5) համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ հաստատում է տեղական հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիրը.»:

Հոդված 4. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) զբաղեցնել որևէ պաշտոն աշխատակազմում և ղեկավար պաշտոն՝ համայնքային ենթակայության կազմակերպություններում.»:

Հոդված 5. Օրենքի 27-րդ հոդվածի 2.2-րդ մասում «համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի» բառերը փոխարինել «համայնքի ավագանու՝ տարիքով ավագ անդամի» բառերով:

Հոդված 6. Օրենքի 35-րդ հոդվածում.

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 29.1-ին կետով՝

«29.1) համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում տեղական հակակոռուպցիոն ծրագրի նախագիծը.»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մաս.

«4. Սույն հոդվածի 1-ին մասի 29.1-ին կետով նախատեսված տեղական հակակոռուպցիոն ծրագիրը կազմելու նպատակով սույն օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը մշակում և տեղական ինքնակառավարման մարմիններին է տրամադրում տեղական հակակոռուպցիոն ծրագրերի մշակման մեթոդաբանությունը:»:

Հոդված 7. Օրենքի 58-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 8. Օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասից հանել «համայնքի գլխավոր ճարտարապետի,» բառերը:

Հոդված 9. Օրենքի 64-րդ հոդվածում.

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Նորընտիր ավագանու առաջին նիստն օրենքի ուժով գումարվում է ավագանու անդամների ընտրվելու վերաբերյալ որոշման պաշտոնական հրապարակումից հետո՝ նախորդ ավագանու լիազորությունների ժամկետի ավարտման օրը: Համայնքի ավագանու ընտրությունների արդյունքները դատարան բողոքարկելու դեպքում, եթե նախորդ ավագանու լիազորությունների ժամկետն ավարտվում է մինչև դատական ակտի պաշտոնական հրապարակումը, նորընտիր ավագանու առաջին նիստն օրենքի ուժով գումարվում է դատական ակտի պաշտոնական հրապարակումից հետո՝ 3-րդ օրը:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1-ին և 1.2-րդ մասեր.

«1) Համայնքների միավորման պարագայում նորընտիր ավագանու առաջին նիստն օրենքի ուժով գումարվում է ավագանու անդամների ընտրվելու վերաբերյալ որոշման կամ ընտրությունների արդյունքները դատարան բողոքարկելու դեպքում՝ դատական ակտի պաշտոնական հրապարակումից հետո՝ 10-րդ օրը:

2) Մինչև համայնքի ղեկավարի ընտրվելը ավագանու նիստը վարում է ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամը:»:

Հոդված 10. Օրենքի 67-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մաս.

«4. Մինչև 7 անդամ ունեցող խմբակցությունն ունենում է մեկ գործավար, 7-ից ավելի անդամ ունեցող խմբակցությունն ունենում է մեկ գործավար և 1 փորձագետ:»:

Հոդված 11. Օրենքի 102-րդ հոդվածում.

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.3-րդ մասով.

«3.3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալին, Գեղարքունիքի մարզի Ճամբարակ, Լոռու մարզի Ալավերդի և Տաշիր, Սյունիքի մարզի Սիսիան համայնքներում 2022 թվականի սեպտեմբերի 25-ին անցկացնել ավագանու ընտրություններ՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների անցկացման կարգով: Ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո՝ 5-րդ օրը, իսկ ընտրությունների արդյունքները դատարան բողոքարկելու դեպքում դատական ակտի հրապարակման օրվան հաջորդող օրը Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածավան, Թալին, Գեղարքունիքի մարզի Ճամբարակ, Շողակաթ, Լոռու մարզի Ալավերդի, Ախթալա, Մեծավան, Շնող, Սարչապետ, Տաշիր, Օձուն, Սյունիքի մարզի Գորայք, Սիսիան համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների, սույն օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պաշտոնատար անձանց կողմից նշանակված համայնքների ղեկավարների պաշտոնակատարների լիազորությունները համարվում են դադարած. այդ նույն օրը միավորված համայնքների ավագանիների անդամները ստանձնում են իրենց լիազորությունները:»:

2) 4-րդ մասի «3.2-րդ» բառից հետո լրացնել «, 3.3-րդ» բառը.

Հոդված 12. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված մեթոդաբանությունը համայնքներին է տրամադրվում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում:

Հոդված 13. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածի.

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Համայնքի ավագանու նիստը հրավիրում և վարում է համայնքի ղեկավարը, կամ նրա բացակայության դեպքում՝, ~~կամ~~ նրա տեղակալը, կամ ~~նրա~~ համայնքի ղեկավարի պաշտոնակատարը, իսկ սույն օրենքի 27-րդ հոդվածի 2.2-րդ մասով սահմանված դեպքում՝ ~~համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը~~ համայնքի ավագանու՝ տարիքով ավագ անդամը. նրանք ունեն խորհրդակցական ձայնի իրավունք:».

2) 5-րդ մասում «համայնքի ղեկավարը կամ նրա պաշտոնակատարը» բառերը փոխարինել «նիստը վարողը» բառերով:

Հոդված 2. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում «նրա պաշտոնակատարը» բառերը փոխարինել «կամ նրա բացակայության դեպքում՝ նրա տեղակալը, կամ ~~նրա~~ համայնքի ղեկավարի պաշտոնակատարը, իսկ սույն օրենքի 27-րդ հոդվածի 2.2-րդ մասով սահմանված դեպքում՝ ~~համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը~~ համայնքի ավագանու՝ տարիքով ավագ անդամը» բառերը:

Հոդված 3. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 41.5-րդ կետով՝

«41.5) համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ հաստատում է տեղական հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիրը.»:

Հոդված 4. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) զբաղեցնել որևէ պաշտոն աշխատակազմում և ղեկավար պաշտոն՝ համայնքային ենթակայության կազմակերպություններում.»:

Հոդված 5. Օրենքի 27-րդ հոդվածի 2.2-րդ մասում «համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի» բառերը փոխարինել «համայնքի ավագանու՝ տարիքով ավագ անդամի» բառերով:

Հոդված ~~5~~6. Օրենքի 35-րդ հոդվածում.

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 29.1-ին կետով՝

«29.1) համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում տեղական հակակոռուպցիոն ծրագրի նախագիծը.»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մաս.

«4. Սույն հոդվածի 1-ին մասի 29.1-ին կետով նախատեսված տեղական հակակոռուպցիոն ծրագիրը կազմելու նպատակով սույն օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը մշակում և տեղական ինքնակառավարման մարմիններին է տրամադրում տեղական հակակոռուպցիոն ծրագրերի մշակման մեթոդաբանությունը:»:

Հոդված ~~6~~7. Օրենքի 58-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված ~~7~~8. Օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասից հանել «համայնքի գլխավոր ճարտարապետի,» բառերը:

Հոդված ~~8~~9. Օրենքի 64-րդ հոդվածում.

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Նորընտիր ավագանու առաջին նիստն օրենքի ուժով գումարվում է ավագանու անդամների ընտրվելու վերաբերյալ որոշման պաշտոնական հրապարակումից հետո՝ նախորդ ավագանու

լիազորությունների ժամկետի ավարտման օրը: Համայնքի ավագանու ընտրությունների արդյունքները դատարան բողոքարկելու դեպքում, եթե նախորդ ավագանու լիազորությունների ժամկետն ավարտվում է մինչև դատական ակտի պաշտոնական հրապարակումը, նորընտիր ավագանու առաջին նիստն օրենքի ուժով գումարվում է դատական ակտի պաշտոնական հրապարակումից հետո՝ 3-րդ օրը:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1-ին և 1.2-րդ մասեր.

«1) Համայնքների միավորման պարագայում նորընտիր ավագանու առաջին նիստն օրենքի ուժով գումարվում է ավագանու անդամների ընտրվելու վերաբերյալ որոշման կամ ընտրությունների արդյունքները դատարան բողոքարկելու դեպքում՝ դատական ակտի պաշտոնական հրապարակումից հետո՝ 10-րդ օրը:

2) Մինչև համայնքի ղեկավարի ընտրվելը ավագանու նիստը վարում է ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամը:»:

Հոդված ~~9~~10. Օրենքի 67-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մաս.

«4. Մինչև 7 անդամ ունեցող խմբակցությունն ունենում է մեկ գործավար, 7-ից ավելի անդամ ունեցող խմբակցությունն ունենում է մեկ գործավար և 1 փորձագետ:»:

Հոդված 1~~0~~1. Օրենքի 102-րդ հոդվածում.

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.3-րդ մասով.

«3.3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալին, Գեղարքունիքի մարզի Ճամբարակ, Լոռու մարզի Ալավերդի և Տաշիր, Սյունիքի մարզի Սիսիան համայնքներում 2022 թվականի սեպտեմբերի 25-ին անցկացնել ավագանու ընտրություններ՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների անցկացման կարգով: Ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո՝ 5-րդ օրը, իսկ ընտրությունների արդյունքները դատարան բողոքարկելու դեպքում դատական ակտի հրապարակման օրվան հաջորդող օրը Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածավան, Թալին, Գեղարքունիքի մարզի Ճամբարակ, Շողակաթ, Լոռու մարզի Ալավերդի, Ախթալա, Մեծավան, Շնող, Սարչապետ, Տաշիր, Օձուն, Սյունիքի մարզի Գորայք, Սիսիան համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների, սույն օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պաշտոնատար անձանց կողմից նշանակված համայնքների ղեկավարների պաշտոնակատարների լիազորությունները համարվում են դադարած. այդ նույն օրը միավորված համայնքների ավագանիների անդամները ստանձնում են իրենց լիազորությունները:»:

2) 4-րդ մասի «3.2-րդ» բառից հետո լրացնել «, 3.3-րդ» բառը.

Հոդված 1~~1~~2. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված մեթոդաբանությունը համայնքներին է տրամադրվում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում:

Հոդված 1~~2~~3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»ՕՐԵՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կ-275-26.05.2022-ՏՏԳՇ-011/0 «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին». Կ-275[1]-26.05.2022-ՏՏԳՇ-011/0 «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», Կ-275[2]-26.05.2022-ՏՏԳՇ-011/0 «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկներ

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
ՀՀ կառավարություն	«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերում ուժի մեջ մտնելու վերաբերյալ հոդվածներ (համապատասխանաբար՝ հոդված 12 և հոդված 4)	1. «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների ուժի մեջ մտնելու ժամկետները սինխրոնացնել «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետի հետ	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է

ՀՀ կառավարություն	«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներ	**2.** Ավագանու հերթական և արտահերթ նիստեր հրավիրելու և անցկացնելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձանց ցանկից հանել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին, փոխարենը քննարկել այդ իրավասությամբ ավագանու՝ տարիքով ավագ անդամին սահմանելու հարցը: **3.** Առաջարկությունն ընդունվելու դեպքում՝ անհրաժեշտություն կառաջանա համապատասխան փոփոխություն կատարել նաև գործող օրենքի 27-րդ հոդվածի 2.2-րդ մասում	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: Ընդունվել է, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2.2-րդ մասում կատարվել է փոփոխություն	Ընդունվել է